ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հունիսի 19-ից 21-ը Ղրղզստանի Հանրապետություն (ք.Բիշքեք) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Շուշանիկ Ներսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղրղզստանի Հանրապետություն, ք.Բիշքեք, հունիսի 19-ից 21-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարություն/ Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղուման նպատակն էր մասնակցել ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների 69-րդ խորհրդին և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 31-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 31-րդ նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել նախորդ հանդիպման ժամանակ ընդունված որոշումների իրականացման ընթացքին, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների միջև ժամանակավորապես անձնական օգտագործման նպատակով բացթողնված տրանսպորտային միջոցներին, մաքսային տարանցման միատեսակ մոտեցման ձևավորմանը, տարանցիկ ապրանքների էլեկտրոնային փոխանակման պիլոտային ծրագրի գործարկմանը, Եվրասիական տնտեսական միության տարածքում ապրանքների միասնական տարանցիկ համակարգի ներդրմանը, ԵՏՄ-ում տրանզիտի

էլեկտրոնային հայտարարագրերի փորձարկմանը և մի շարք այլ կարևորագույն հարցերի:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Բացի վերոնշյալից, հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև լիազորված տնտեսական օպերատորի կողմից առաջնահերթության կարգով իրականացվող մաքսային գործառնությունների, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից տրանսպորտային և առևտրային փաստաթղթերի կնքման հետ կապված որոշ հարցեր:

ՌԴ մաքսային ծառայության ղեկավարի հետ հադիպման ժամանակ աշխատանքային քննարկում է տեղի ունեցել՝

- մրգի արտահանման սեզոնին Լարսի անցակետում առաջացող խնդիրների,
- ԱՏԳ կենտրոնների ստեղծման,
- բրոքերական ինստիտուտների վերանայման վերաբերյալ և այլն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստերի ընթացքում ստորագրվել են ընդհանուր առմամբ թվով 35 որոշումներ, որոնք վերաբերում են մաքսային գործի տարբեր բնագավառներին: Մասնավորապես Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի նիստի ընթացքում ստորագրվել են ԵԱՏՄ մաքսային տարածքով ապրանքների տարանցիկ փոխադրման միասնական համակարգի ստեղծման, մաքսային տարանցման ժամկետի սահմանման միասնական մոտեցումների մշակման, ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների մասին ԵԱՏՄ անդամ պետությունների միջև տեղեկատվության փոխանակման, ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան որոշակի ապրանքների դասակարգման, անձնական օգտագործման ապրանքների մաքսային հայտարարագրման, ԵԱՏՄ անդամ պետությունների օրենսդրությունների խախտման դեպքերը բացառելու նպատակով մաքսային տարանցում մաքսային ընթացակարգի ավարտման մասով լրացուցիչ միջոցների կիրառման վերաբերյալ որոշումներ:

ԱՊՀ մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի նիստի ընթացքում ստորագրվել են ԱՊՀ անդամ պետությունների մաքսային

ծառայությունների համար անձնակազմի նախապատրաստման, մաքսային մարմինների և երկաթուղային փոխադրողների համագործակցության, բեռնատրանսպորտային միջոցների կշռման միջազգային հավաստագրի կիրառման վերաբերյալ որոշումներ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Որոշում է կայացվել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի հաջորդ՝ 32-րդ նիստն անցկացնել 2019 թվականի երրորդ, իսկ ԱՊՀ մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 70-րդ նիստը՝ չորրորդ եռամսյակում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____

25.06.2019թ.